ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ **2024թ. նոյեմբերի 8 -ին, N500-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԷԼՄԻՐԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ կետով, ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 220-րդ հոդվածի 1-ին մասով, 222-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-րդ հոդվածով, 226-րդ հոդվածով, և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակիցների կողմից 2024 թվականի հոկտեմբերի 25-ի ՀՀ Արագածոտնի մարզի «Բյուրականի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /այսուհետ դպրոց/ այցելելու արդյունքում կազմված արձանագրությունն ու դրա հիմքով նույն դպրոցի տնօրենի պարտականությունները կատարող Էլմիրա Գալստյանի կողմից տրված բացատրագիրը, համաձայն որոնց՝ հիմնավորվել է, որ Է.Գալստյանը 2024 թվականի մայիսի 20-ից մինչև ուսումնասիրության պահի դրությամբ որևէ անգամ չի հայտարարել մրցույթ ֆրանսերենի ուսուցչի առկա թափուր տեղի համար, ինչով էլ խախտել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն գործող հրամանով նախատեսված օրինակելի կարգի 6-րդ կետի պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Է.Գալստյանի կողմից խախտման մեջ մեղքը ընդունելու հանգամանքը,

որոշում եմ

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու հիմքով ՀՀ Արագածոտնի մարզի «Բյուրականի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի տնօրենի պարտականությունները կատարող Էլմիրա Գալստյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:
2. Սույն որոշման մասին տեղեկացնել Է. Գալստյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 08.11.2024 14:01:24 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ